ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«**06**» մայիսի 2015 թվականի No 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին որոշում է հաստատել համայնքի ավագանու 2015 թվականի մայիսի 6-ի №5 հերթական նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N52-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները սահմանելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի գյուղական համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքն աճուրդային կարգով օտարելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի գյուղական համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի №57-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ 8 Դեմ 0 Ձեռնպահ 0

Էդուարդ Մարգարյան
Հրաչյա Ավետիսյան
Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արթուր Նավասարդյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» մայիսի 2015 թվականի No 16-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N52-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝ *որոշում է.*

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի գյուղական համայնքի 2015 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին» N52-Ն որոշման հավելվածում 10-րդ կետից հետո լրացնել 10.1-րդ կետը համաձայն հավելված 1-ի:

Կողմ 8 Դեմ 0 Ձեռնպահ 0

Էդուարդ Մարգարյան
Հրաչյա Ավետիսյան
Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արթուր Նավասարդյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի № 16-Ն ՈՐՈՇՄԱՆ

Կ. Տ.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ,

բդ) 3001-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1000 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 50 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000 դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 2500դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ.

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 60 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 800 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 400 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500. դրամ.

դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1 000 դրամ:

9. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50000դրամ:

10.Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:

10.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 250000դրամ:

11. համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 դրամ.

12. տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10000դրամ:

13. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել 5000դրամ:

14.շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար սահմանել 3000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«**06**» մայիսի 2015 թվականի No 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ /ՀՐԱԺԵՇՏԻ/ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ /ԿԱՄ/ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝ *որոշում է.*

Սահմանել Զովունի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները՝ համաձայն հավելվածի:

Կողմ 8 Դեմ 0 Ձեռնպահ 0

Էդուարդ Մարգարյան
Հրաչյա Ավետիսյան
Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արթուր Նավասարդյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ

ՋՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի № 17
ՈՐՈՇՄԱՆ

Կ. Տ.

ՋՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԵՆՔԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ1.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են Ջովունի համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման համար նախատեսված շենքերին և շինություններին (այսուհետև՝ քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահ) ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները:

2. Քաղաքացիական հոգեհանգստի ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվությունը տալիս է Ջովունի համայնքի ղեկավարը՝ ընթացիկ տարվա տեղականտուրքի վճարման անդորրագրի հիման վրա, եթե քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը թույլտվության տրամադրման պահին (ինչպես առաջին, այնպես էլ հաջորդ անգամ) համապատասխանում է սույն հավելվածով սահմանված սահմանափակումներին, պահանջներին և պայմաններին:

3. Առանց թույլտվության քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացումը և (կամ) մատուցումը առաջացնում է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվություն:

ԳԼՈՒԽ2.
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍՐԱՀՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները կարող են գտնվել՝

Ուսումնական, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից՝ նվազագույնը 50մ, իսկ անհատական բնակելի տներից և բազմաբնակարան շենքերից նվազագույնը 40մ հեռավորության վրա բացառությամբ, եթե դրանք գտնվելու են՝ միայն անհատական բնակելի տներից և բազմաբնակարան շենքերից մինչև սույն կետի առաջին ենթակետում նշված հեռավորությունների վրա և առկա է դրանց սեփականատերերի գրավոր համաձայնությունը:

5. Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին և պայմաններին՝

1) Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահները պետք է ունենան՝

ա. հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակ՝ առնվազն 60 քմ,

բ. սանհանգույց

գ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված առաջին բժշկական օգնության համար անհրաժեշտ դեղորայքով և կահավորված սենյակ,

դ. հուղարկավորությունը ստանձնողների ընդունման համար նախատեսված առանձին մուտքով գրասենյակային տարածք,

2) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահում հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված երկու և ավելի սենյակի առկայության դեպքում յուրաքանչյուրը պետք է ունենա առանձին մուտք և սանհանգույց,

3)քաղաքացիական հոգեհանգստի իրականացման ծառայություններն իրականացվում և (կամ) մատուցվում են միայն շինության տարածքում այնպես, որ սրահի տարածքից դուրս գտնվող անձանց համար սգո պարագաները, այդ թվում՝ ծաղիկները և ծաղկեպսակները տեսանելի չլինեն՝ բացառությամբ ավտոկայանատեղիի,

4) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահների ցուցանակները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի « Արտադրողի (կատարողի, վաճառողի) կողմից տեղեկատվություն զետեղելու ցուցանակին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N270 որոշման պահանջներին:

5) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահի տարածքը պետք է ունեն աառնվազն 20 ավտոմեքենայի համար նախատեսված կայանատեղ,

6) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահին կից պետք է լինի
առնվազն 50քմ մակերեսով տարածք՝ քաղաքացիական հոգեհանգստի արարողությանը մասնակցող անձանց գտնվելու համար՝ ապահովված աղբամաններով, լուսավորությամբ և ծխելու համար նախատեսված (առանձնացված) հատվածով,

7) քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը պետք է ունենա ջեռուցման, հովացման, օդափոխության, իսկ հանգուցյալի մարմնի և (կամ) աճյունի տեղադրման համար նախատեսված սենյակում նաև երաժշտության ձայնային համակարգեր,

8) քաղաքացիական հոգեհանգստի սրահի շահագործողը քաղաքացիական հոգեհանգստի սրահում ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման ընթացքում պետք է ապահովի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված քաղաքաշինական, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ (սանիտարահամաճարակաբանական) նորմերի ու կանոնների պահպանումը:

9) Քաղաքացիական հոգեհանգստի իրականացման սրահը կարող է ունենալ նաև հոգևորականի համար նախատեսված սենյակ, ինչպես նաև առանձին մուտքով ծաղիկների և սգո պարագաների վաճառքի սրահ, որի ցուցափեղկերը և մուտքերը պարտադիր պետք է լինեն վարագուրապատված կամ մգավորված ապակիներով այնպես, որ վաճառվող ապրանքների նմուշները դրսից տեսանելի չլինեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» մայիսի 2015 թվականի No 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող հողատարածքները օտարել աճուրդային կարգով համաձայն հավելվածի և կից ներկայացվող հողամասերի հատակագծերի:

Կողմ 8 Դեմ 0 Ձեռնպահ 0

Էդուարդ Մարգարյան
Հրաչյա Ավետիսյան
Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արթուր Նավասարդյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված

ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի No 18 ՈՐՈՇՄԱՆ

Կ. Տ.

Լոտ	Ծածկագիրը	Մակերեսը /հա/	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Մեկնարկային գին /դրամ/	Անվանումը	Գտնվելու վայրը	սահմանափակումներ
1	07-029-0020-0080	0.0375	բնակավայրերի	այլ հող	1696500	Հողամաս	Կոտայքի մարզ գ. Զովունի 1փ 193	չկան
2	07-029-0020-0079	0.0825	բնակավայրերի	այլ հող	3732300	Հողամաս	Կոտայքի մարզ գ. Զովունի 1փ 193/1	չկան
3	07-029-0185-0037	0.49094	գյուղատնտեսական	այլ հող	581764	Հողամաս	Կոտայքի մարզ գ. Զովունի	չկան

ԳԱՆՈՒՄՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Էջ հումայի մարդ ցանկալի հանվելք

Ամսաթիվ՝ 26.04.2000

ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻՇ

ՀՀ Կոտայքի մարզ Զովունի համայնք

Մասշտաբ 1:2000

ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ՀՀ Կոտայքի մարզի Զովունի համայնք

Մասշտաբ 1:2000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» մայիսի 2015 թվականի No 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ սահմանված կարգի 6-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով նաև Կարեն Հակոբյանի դիմումը համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

. Կարեն Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 185-003-1 ծածկագրի տակ գտնվող 0.03հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատարածքին կից համայնքային սեփականություն հանդիսացող 07-029-0185-0063 ծածկագրի տակ գտնվող 0.02005հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատարածքը ուղղակի վաճառքի միջոցով՝ հողատարածքի կադաստրային արժեքով վաճառել Կարեն Հակոբյանին նրան սեփականության իրավունքով պատկանող 185-003-1 ծածկագրի տակ գտնվող 0.03հա ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատարածքի ընդլայնման համար:

Կողմ 8 Դեմ 0 Ձեռնպահ 0

Էդուարդ Մարգարյան
Հրաչյա Ավետիսյան
Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արթուր Նավասարդյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Ջովունի համայնքի հողամասերի աճուրդով կամ ուղղակի վաճառքով տրամադրելու համար

Մասշտաբ 1:2000



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«**06**» մայիսի 2015 թվականի No 20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետի պահանջներով համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեի հաստատման մասին» №57-Ն որոշման հավելվածում՝ կատարել փոփոխություններ համաձայն հավելված 1-ի:

Կողմ 8 Դեմ 0 Ձեռնպահ 0

Էդուարդ Մարգարյան
Հրաչյա Ավետիսյան
Արմեն Ալեքյան
Կարեն Խաչատրյան
Արթուր Նավասարդյան
Արմեն Բարսեղյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված 1

ԶՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի No 20

ՈՐՈՇՄԱՆ

Կ. Տ.

1.Հատված 1-ի համայնքի բյուջեի եկամուտները

Տող N 1131 հոդված N 71452

<<1500.5>> թիվը փոխարինել <<2250.5>> թվով:

Տող N 1257

<<0.0>> թիվը փոխարինել <<1068.0>> թվով

2.Հատված 2-ի համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

Տող N 2951 Արտադպրոցական դաստիարակություն

<<11850.0>> թիվը փոխարինել <<12918.0>> թվով

Տող N 3070 սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ

<<6500.0>> թիվը փոխարինել <<7250.0>> թվով:

Տող N 2521 կեղտաջրերի հեռացում՝ ֆոնդային բյուջեի

<<10000.0>> թիվը փոխարինել <<10540.0>> թվով

3.Հատված 3-ի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման

Տող N 4634՝այլ նպաստներ բյուջեից

<<6500.0>> թիվը փոխարինել <<7250.0>> թվով

Տող N 5112՝ շենքերի և շինությունների կառուցում

<< 22000.0>> թիվը փոխարինել <<22540.0>> թվով

Տող N 4531՝ ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին

<<42244.0>> թիվը փոխարինել <<43312.0>> թվով

4. Հատված 6-ի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման

Տող N 2521 Կեղտաջրերի հեռացում՝ ֆոնդային բյուջեի

<<6000.0>> թիվը փոխարինել <<6540.0>> թվով

Տող N 2951 Արտադպրոցական դաստիարակություն

<<11850.0>> թիվը փոխարինել <<12918.0>> թվով

Տող N 3071 Սոցիալական հատուկ արտոնություններ

<<6500.0>> թիվը փոխարինել <<7250.0>> թվով